

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2014թ. հունվար-հունիսին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

**1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**

1 000 մարդ

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2012 թ. հուլիսի 1-ի դրությամբ <sup>1</sup>	3 024.2	1 573.8	1 450.4
2013 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3 011.9	1 567.4	1 444.5
2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3 009.8	1 569.7	1 440.1

**2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի <sup>2</sup>**

տարի

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2012թ.	74.3	77.5	70.9
2013թ.	74.8	77.9	71.5

**3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

1 000 կենդանի ծնվածի հաշվով

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-հունիս	12.7	11.3	13.2
2013թ. հունվար-հունիս	9.8 <sup>◇</sup>	8.6 <sup>◇</sup>	10.9 <sup>◇</sup>
2014թ. հունվար-հունիս	9.1	7.9	10.1

**4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

1 000 կենդանի ծնվածի հաշվով

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-հունիս	14.4	12.5	15.2
2013թ. հունվար-հունիս	11.2 <sup>◇</sup>	9.8 <sup>◇</sup>	12.3 <sup>◇</sup>
2014թ. հունվար-հունիս	10.7	9.4	11.8

<sup>1</sup> Վերահաշվարկվել է՝ ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների:

<sup>2</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5. Մայրական մահացության գործակիցը, 100 000 կենդանի ծնվածի հաշվով, 2014թ. հունվար-հունիսին կազմել է 10.3 (2 դեպք)՝ 2013թ. հունվար-հունիսի 26.6 (5 դեպք) դիմաց:

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2013/2014 ուսումնական տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2014թ. հունվար-մարտին կազմել է 248 876 դրամ (605 ԱՄՆ դոլար կամ 442 եվրո):

14. Գործազրկության մակարդակը<sup>1</sup> 2014թ. հունվար-մարտին (I եռամսյակ) կազմել է 17.8%, կանանցը՝ 18.5%, տղամարդկանցը՝ 17.1% (մանրամասները տե՛ս՝ էջ 88-ում):

15. 2014թ. հունվար-մարտին (I եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված<sup>1</sup> է եղել ՀՀ բնակչության 39.0%-ը, այդ թվում կանանց՝ 35.2%-ը և տղամարդկանց՝ 43.4%-ը:

---

<sup>1</sup> Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: